որոշ չափով արհեստականորեն ուռճացված կլինեն, քանի որ որոշ ցուցանիշներ (մասնավորապես՝ կրթության մակարդակը) վերցված են միայն քաղաքային տարածաշրջանների համար: Բացի այդ, ամենամեծ տատանումներ (վարիացիաներ ունեցող) կարող են ունենալ կյանքի մակարդակի ցուցանիշները, առաջին հերթին՝ շահագործման հանձնված բնակմակերեսի, ինչպես նաև շահույթի, մասնավոր հատվածում զբաղվածության և միգրացիոն սալդոյի ցուցանիշները: Միաժամանակ, ենթադրվում է, որ արդյունաբերական արտադրության, արտահանման, հարկային մուտքերի, հանցավորության մակարդակի և կրեդիտորական պարտքերի ծավալների ցուցանիշների տարածքային բաշխումը բավականին կայուն բնույթ կունենա գրեթե բոլոր տարածաշրջանների համար:

Ստացված մեծությունների բովանդակային մեկնաբանությունը կարող է լինել հետևյալը. հաշվարկված ինդեքսի մեծությունը ցույց է տալիս տարածաշրջանի դիրքը՝ համեմատած լավագույն և վատագույն արդյունքների հետ: Օրինակ՝ եթե մասնավոր ինդեքսի (ենթադրենք՝ արդյունաբերական արտադրության մակարդակը) հավասար է 0,5-ի, ապա դա նշանակում է, որ այդ ցուցանիշով տարածաշրջանը միջին դիրք է գրավում սանդղակում, այլ ոչ թե այն, որ դրանում արդյունաբերական արտադրության մակարդակը 2 անգամ փոքր կամ մեծ է էքստրեմալ (առավելագույն հնարավոր) մեծություններից: Բոլոր տարածաշրջանների համար ինդեքսի միջին մեծությունն արտացոլում է ցուցանիշների տարբերակումը, այսինքն՝ ինչքան այն մոտ է 0-ին, այնքան ուժեղ են տարբերակված ցուցանիշները և հակառակը:

Երևան քաղաքի և մյուս տարածաշրջանների միջև կարող են նկատվել կտրուկ տարբերություններ, որը Երևանի (այդ թվում՝ նաև որպես մայրաքաղաքի) յուրահատկության արդյունք է: Առաջին հերթին ֆինանսական հոսքերի կուտակման շնորհիվ Երևանը մյուս տարածաշրջանների համեմատությամբ տիրապետում է հսկայական շուկայի: Շահույթի մեծությունը, որը ստացվում է մայրաքաղաքի ձեռնարկություններից և կազմակերպություններից կողմից և դրանցից վճարված հարկերի ծավալներն իրենց մեջ ներառում են, այսպես կոչված, «դիրքային ռենտա», քանի որ այլ տարածաշրջաններում ստացված շահույթը շատ հաճախ «գրանցվում է» Երևանում, որտեղ գտնվում են տարածաշրջաններում գործունեություն ծավալող գլխամասային ընկերությունները կամ ձեռնարկությունների կառավարման մարմինները: Բացի այդ, Երևանում ցուցանիշների բարձր մեծությունները մասնակիորեն հանդիսանում են նաև վիճակագրական հաշվառման արդյունք: Օրինակ, Երևանում ապրանքաշրջանառությունը ձևավորվում է հիմնականում այն մարդկանց շնորհիվ, որոնք ժամանակավորապես աշխատում են մայրաքաղաքում կամ հանդիսանում են զբոսաշրջիկներ և այլն, այսինքն՝ ճոճանակային միգրացիայի շնորհիվ: Այսինքն՝ տվյալ ցուցանիշի ձևավորման գործում ներդրում են ունենում ավելի շատ թվով մարդիկ, քան Երևանի մշտական բնակչությունն է, ինչը վիճակագրությամբ չի կառավարվում և ձևավորում է կյանքի մակարդակի ցուցանիշների բավականին բարձր մեծություններ:

ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱՋՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.թ.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ցանկացած տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ներուժի (ՍՏՆ) մեծությունը հիմնականում բնութագրվում է նրա պոտենցիալ ռեզերվներով, տարածաշրջանում (մարզում, համայնքում) առկա ռեսուրսների ամբողջ համալիրի ներգրավման հնարավորություններով, դրա կառուցվածքի առանձնահատկությունների, աշխարհագրական դիրքի, տնտեսական աճի իներցիայի, սոցիալական ու ինստիտուցիոնալ գործոնների օգտագործմամբ: Այս առումով, ***շուկայական տնտեսության պայմաններում տարածաշրջանի ՍՏՆ-ի գնահատումը նախ և առաջ պետք է կայանա տարածաշրջանային զարգացման այն գործոնների գնահատման մեջ, որոնք արտացոլում են տվյալ տարածաշրջանի մրցակցային առավելությունները:*** Համապատասխանաբար, տարածաշրջանի ՍՏՆ-ի վերլուծությունը պետք է կառուցվի տարածքային-տնտեսական համակարգի երեք բաղկացուցիչների՝ տարածքի, բնակչության և տնտեսության քանակական ու որակական բնութագրիչների քննարկման միջոցով:

Բնակչության բնութագրումը հնարավոր է կյանքի որակի և կյանքի մակարդակի տեսանկյուններից, իսկ տնտեսության բնութագրման համար օգտագործելի են դրա մասշտաբները, արդյունավետության մակարդակը և այլն: Խնդիրն ավելի բարդ է տարածքի գնահատման տեսանկյունից: Մեր կարծիքով, որպես դրա բնութագրիչներ՝ կարող են հանդես գալ տարածքի տնտեսա-աշխարհագրական դիրքը (որը բնութագրում է արտաքին միջավայրի տեսանկյունից դրա մրցունակությունը) և տարածքի ենթակառուցվածքային յուրացման կամ զարգացման մակարդակը (ներքին միջավայրի զարգացման մակարդակը): Բոլոր ցուցանիշները պետք է դիտարկվեն տարածաշրջանային մյուս (համանման) օբյեկտների ցուցանիշների համադրման մեջ, քանի որ մրցունակությունը հարաբերական ցուցանիշ է և իմաստ ունի միայն տնտեսական տվյալ ագենտի կամ տարածաշրջանային համակարգի ցուցանիշներն այլ ագենտների (տարածաշրջանային համակարգերի) ցուցանիշների հետ համեմատության դեպքում: Այս կապակցությամբ վերլուծության տրամաբանական ընդհանուր սխեման կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

Բացի ՍՏՆ-ի ցուցանիշների բացարձակ արժեքներից, կարևոր են նաև դրանից տարբերի միջև համամասնությունները, որոնք ընդհանուր առմամբ բնութագրում են ՍՏՆ-ի և դրա առանձին բաղադրիչների զարգացման մակարդակը, ինչպես նաև միջտարածաշրջանային համամասնությունները: Ելնելով երկրում զարգացող գործընթացներից՝ և ունենալով ՍՏՆ-ի հաշվարկման (գնահատման) արդյունքները՝ կարելի է կանխատեսել տնտեսական զարգացման հիմնական գծերը, որով որոշվում են տարածաշրջանի զարգացման գլխավոր նպատակները, այն է՝ «կենսունակությունը», շուկայի պայմաններին հարմարվելը, տնտեսավարող կառույցների մրցունակությունը, հասարակական խմբերի շահերի իրացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը և այլն.

ՍՏՆ-ի կառուցվածքային տարբերի գնահատման լրացուցիչ չափանիշներ կարող են հանդիսանալ նաև հետևյալ ցուցանիշները:

1. **Տեղաբաշխման տարողունակությունը**, որի տակ հասկացվում է տարածաշրջանում տնտեսական նոր օբյեկտների ստեղծման կամ գործողների ընդլայնման պոտենցիալ հնարավորությունը: Տեղաբաշխման տարողունակությունն անմիջականորեն որոշվում է ռեսուրսային սահմանափակումներով և ռեսուրսային մեկ կամ մի քանի սահմանափակումների գծով առավելագույն մակարդակի ձեռքբերմամբ:

2. **Ռեսուրսային սահմանափակումների արդյունավետությունը**: Որևէ ռեսուրսի գծով սահմանափակվածությունը համարվում է կոշտ, եթե այդ ռեսուրսը սահմանափակում է տնտեսական գործունեության հետագա ընդլայնման գործընթացը: Տեղաբաշխման տարողունակության վերականգնման հնարավորությունը կախված է, առաջին հերթին, սկզբունքորեն ռեսուրսի քանակի ավելացման հնարավորությունից, երկրորդ՝ ռեսուրսի վերականգնման համար անհրաժեշտ ծախսերից, այսինքն՝ նվազագույն կապիտալ ներդրումների մակարդակից: Հետևաբար, տեղաբաշխման տարողունակությունը կարող է «սպառվել» ժամանակավորապես և որոշակի պայմանների առկայության ու ծախսերի կատարման պարագայում վերականգնվել կամ էլ այն կարող է «սպառվել» վերջնականապես:

3. **Նորարարությունների նկատմամբ ընկալունակությունը**: Կազմակերպչական-տնտեսական նորարարությունների նկատմամբ ընկալունակությունը հանդիսանում է տարածաշրջանի գործարար ենթակառուցվածքի ներուժի բնութագրիչը և տնտեսական մշակույթի ինդիկատորը: Նորարարությունների նկատմամբ ցանկացած ընկալունակությունը շատ էական է տարածաշրջանի զարգացման հեռանկարների գնահատման և կանխատեսման համար՝ հատկապես զարգացման մի մակարդակից մյուսին անցնելու և տնտեսական աճի ազդակները ստանալու և դրանք յուրացնելու առումով տարածաշրջանի կարողությունների տեսանկյունից:

Նորարարությունների նկատմամբ ընկալունակության չափանիշները շատ հարաբերական են և ժամանակի մեջ բավականին «շարժունակ»: Օրինակ՝ շուկայական հարաբերությունների կայացման փուլում կազմակերպչական-տնտեսական նորարարությունների նկատմամբ ընկալունակության ինդիկատորներ կարող են հանդիսանալ այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ օտարերկրյա ներդրումների ծավալները, առևտրային բանկերի քանակը և դրանց շրջանառությունը, սեփականության նոր ձևերի և շուկայական ինստիտուտների զարգացման ցուցանիշները (օրինակ՝ մասնավոր հատվածում կամ փոքր բիզնեսում զբաղվածների թիվը և այլն):

Այս կապակցությամբ հարկ է նաև նշել, որ տարածաշրջանների հարմարվողականության մակարդակների տարբերությունը կապված է շուկայի տարբեր՝ ստեղծման և բաշխման գործառույթների հետ, որոնցից յուրաքանչյուրը տնտեսական ագենտներից պահանջում է հատուկ, համապատասխանաբար՝ ստեղծագործական (նախաձեռնողական) և հարմարվողական վարքագիծ: Վերջինիս առումով հարմարվելը հավասարազոր է տարածության մեջ տնտեսական գործունեության արդյունավետ բաշխմանը, իսկ ստեղծագործական (նախաձեռնողական) վարքագծի առումով՝ այն աջակցում է ստեղծմանն ու արարմանը, այսինքն՝ շուկայի «ակտիվ» գործառույթներին:

Վարքագծի տնտեսական այս տիպերը ժամանակի և տարածության մեջ փոխարինում են միմյանց, ընդ որում՝ յուրաքանչյուր փոփոխության ժամանակ տնտեսական վարքագիծը պահանջում է տնտեսական որոշակի նոր միջավայր՝ գործոնների յուրահատուկ հավաքածուով և նոր տեխնոլոգիաներով, դրանով իսկ ձևավորելով տարածաշրջանի նոր տիպ: Համապատասխանաբար, առանձնացվում են տարածաշրջանների երկու տիպեր՝ հարմարվող և հարմարողունակ, իսկ տարածաշրջանների ոչ միօրինակությունը պայմանավորված է ձեռնարկատերերի տնտեսական վարքագծի տարբեր տիպերի ոչ հավասար բաշխմամբ: Հարմարողունակ տարածաշրջաններում գերակշռում են այնպիսի ֆիրմաները, որոնք ստեղծում կամ ակտիվորեն ձևավորում են շուկան, իսկ հարմարվող տարածաշրջաններում գերակշռում են այնպիսի ֆիրմաները, որոնք հիմնականում տնտեսում են ծախքերի կրճատման հաշվին:

Տարածաշրջանների անհավասարության այսպիսի մեկնաբանության պարագայում գնալով բավականին խոշոր հիմնախնդիր է դառնում տարածաշրջանների դինամիկ մրցունակության ապահովումը, որն արտացոլում է ձևավորված նոր պայմաններին համապատասխան տարածաշրջանների վերակառուցվելու պոտենցիալ տարբեր հնարավորությունները:

4. **Տարածաշրջանի դինամիկ որակների դիագնոստիկան**: Տարածաշրջանային համակարգի դինամիկ որակները բնութագրվում են այնպիսի հատկություններով, ինչպիսիք են՝ կայունությունը, իներցիոնությունը և ճկունությունը: Տարածաշրջանային համակարգի նոր տարրերի ձևավորումը որոշվում է դրանց հատուկ ունակությամբ՝ կառուցվածքաստեղծ կարողությամբ: Վերջինս արտահայտվում է իրական (գոյություն ունեցող) տարրերի համակարգում հնարավոր, պոտենցիալ կառուցվածքի առկայությամբ: Ընդ որում, զարգացման հեռանկարների գնահատման համար կարևոր է որոշել համակարգի «տարիքը»՝ տնտեսական աճի գործընացների փուլային տեսանկյունից, որի պատճառով տարածաշրջանի համար առաջին հերթին անհրաժեշտ է սահմանել կառուցվածքի կայունության մակարդակը:

Կայունության մակարդակի դիագնոստիկայի դեպքում անհրաժեշտ է տարբերակել կառուցվածքի երեք տեսակներ՝ կայուն, անկայուն և ձևավորվող: Կայուն կառուցվածքը բնորոշ է արդեն յուրացված, վաղուց ձևավորված և վերակառուցման հնարավորությունները գրեթե սպառած արտադրության կառուցվածք ունեցող տարածաշրջաններին: Անկայուն կառուցվածք կարող է նկատվել ինչպես տնտեսական զարգացման բարձր մակարդակի պայմաններում տնտեսական ինտենսիվ աճ ունեցող, այնպես էլ ոչ այնքան զարգացած տարածաշրջաններում՝ նույնիսկ նոր ներդրումների աննշան ծավալների առկայության դեպքում: Ձևավորվող կառուցվածքը բնութագրական է նոր յուրացվող տարածաշրջանների համար, այն տարածաշրջանների համար, որոնք անցում են կատարում զարգացման նախաինդուստրիալ փուլից ինդուստրիալ զարգացման փուլ, կամ էլ այն տարածաշրջանների համար, որոնք գտնվում են տնտեսական պրոֆիլի արմատական վերակառուցման գործընթացում (վերջին իրավիճակը հաճախ տեղի է ունենում տնտեսական ճգնաժամից և տնտեսական ներուժի մասնակի քայքայումից հետո):

Ընդհանուր առմամբ, ՍՏՆ-ի և դրա տարրերի զարգացումը հիմնականում կապված է հասարակության և տնտեսության էվոլյուցիայի ընդհանուր միտումների, մասնավորապես՝ նախաինդուստրիալ փուլից ինդուստրիալ, իսկ հետագայում էլ՝ հետինդուստրիալ զարգացման փուլին անցնելու հետ: Զարգացման տակ հասկացվում է տնտեսության տարածքային և ճյուղային կառուցվածքի հետևողական, առաջընթացային բարդացումը: Այսպիսով, ՍՏՆ-ն սերտորեն կապված է փուլային տնտեսական աճի տեսության հետ, իսկ տնտեսական գործընթացները, ինչպես հայտնի է, ունեն ցիկլային բնույթ: Այս առումով, տնտեսական ներուժի դինամիկան որոշվում է ընդհանուր առմամբ տնտեսության և դրա առանձին ճյուղերի դինամիկայով:

Ինչպես հայտնի է, առանձնացվում են տնտեսական համակարգի զարգացման հետևյալ փուլերը՝ աճ, աշխուժացում, լճացում (ստագնացիա) և անկում (դեպրեսիա): Այս ասպեկտը չի կարող քննարկվել ինքնին, այլ միայն ավելի բարձր մակարդակի համակարգի միջին տվյալների հետ համեմատության դեպքում: Այսպես. երկրի մասշտաբով տնտեսական աճի տեմպերի անկման կամ առանձին տարածաշրջաններում դրա ընդհանուր ֆոնի վրա կարող է դիտվել նաև հակառակ միտումը կամ էլ այդ գործընթացների համեմատաբար փոքր մասշտաբներ: Տնտեսական ընդհանուր անկման դեպքում կարող են առանձնացվել տարածաշրջաններ, որոնցում այդ միտումներն ունեն սեփական էնդոգեն պատճառներ և կարող են միայն ուժեղանալ կամ թուլանալ ազգային տնտեսության կոնյունկտուրայի տատանումների հետևանքով:

Բաշխման արդյունքների՝ դեռևս չձևավորված կառուցվածք ունեցող շուկայական տնտեսությունների համար տարածաշրջանային տնտեսական անկումը և անկման մուլտիպլիկատորի աճը, որպես կանոն, ունենում են երկու հիմնական պատճառներ: Դրանք կարող են առաջանալ կամ տնտեսական կոնյունկտուրայի տատանումների, կամ էլ այն բնական ռեսուրսների սպառման հետևանքով, որի հիման վրա ժամանակին ստեղծվել էին մասնագիտացված ճյուղերի ձեռնարկությունները: Համապատասխանաբար, տնտեսական կոնյունկտուրայի տատանումները կարող են լինել համեմատաբար կարճաժամկետ կամ երկարաժամկետ՝ կապված տեխնոլոգիական գլոբալ առաջընթացի հետ: Այս կապակցությամբ անհրաժեշտ է զարգացման փուլայնությունը և հետագա տնտեսական աճի հեռանկարները քննարկել տնտեսական կոնյունկտուրայի և տեխնոլոգիական զարգացման երկարաժամկետ ցիկլերի հետ կապի մեջ:

Շուկային անցնելու պայմաններում տարածաշրջանի զարգացումն օբյեկտիվորեն ընթանում է երկակի կախվածության մոդելով, այսինքն՝ տարածաշրջանային տնտեսության ելակետային պայմաններից և ազգային տնտեսության (որի մի մասն էլ այն կազմում է) ելակետային պայմաններից ելնելով: Արտադրանքի կյանքի ցիկլի տեսության տեսանկյունից տնտեսության տարածքային կառուցվածքում զարգացման տարբեր փուլերի համադրումը (համատեղումը) թույլ է տալիս հասնել անվնասաբերության, այնպես, ինչպես դրան կարելի է հասնել արտադրության բազմարդյունք համակարգի պայմաններում: Համապատասխանաբար, առանձին վերցրած ցիկլի ընթացքում (փուլում) զարգացման ներուժը կգնահատվի տարբեր ձևերով՝ տարբեր փուլերում, այն դեպքում, երբ արտադրության ֆիզիկական ծավալն այդ փուլերում կարող է լինել նույնը (տե՛ս գծանկար 1-ը):



Գծանկար 1.

Բերված նկարից ակնհայտ է, որ առաջին հատվածում ներուժը չի օգտագործվում, երկրորդում՝ ներուժն օգտագործվում է ամբողջությամբ և արդյունավետ ձևով, երրորդում՝ ներուժն օգտագործվում է ոչ արդյունավետ ձևով, չորրորդում՝ ներուժը հիմնականում օգտագործված է (մասնակիորեն քայքայված), իսկ հինգերորդում՝ ներուժը մասնակիորեն կամ ամբողջությամբ քայքայված է: Նշենք նաև, որ ներուժի մասնակի և ամբողջությամբ քայքայված լինելու միջև տարբերությունը որոշվում է նրանով, թե համակարգն արդյո՞ք հինգերորդ փուլում գերազանցում է նախորդ մակարդակը, թե՞ ոչ:

Զարգացման նման ցիկլն արդարացված կլինի ինչպես առանձին արտադրանքի կյանքի ցիկլի, այնպես էլ ընդհանուր առմամբ տեխնոլոգիական կացութաձևի կյանքի ցիկլի համար: Տեխնոլոգիական կացութաձևերի

վերափոխման փուլում տեղի է ունենում որակական անցում համեմատաբար հավասարակշիռ մեկ վիճակից մեկ այլ հավասարակշիռ վիճակի՝ տնտեսական ճգնաժամի փուլի միջոցով: Ընդ որում, զուգահեռաբար տեղի են ունենում տնտեսության կառուցվածքային վերափոխումներ, արտադրողական ուժերի տեղաբաշխման ու տարածաշրջանային կազմակերպման առաջընթացի և ինստիտուցիոնալ կառուցվածքի փոփոխության գործընթացներ:

Զարգացման փուլայնության օգտագործումը կարող է բավականին օգտակար լինել ՍՏՆ-ի վերլուծության դեպքում, ցույց տալով, թե զարգացման ո՞ր փուլում է գտնվում տվյալ տարածաշրջանի տնտեսությունը, արդյո՞ք այն ունի զարգացման հեռանկարներ՝ առկա տեխնոլոգիական կացութաձևի և տնտեսության ճյուղային առկա կառուցվածքի շրջանակներում, կամ էլ կարելի՞ է արդյոք սպասել մասնագիտացված ճյուղերի կառուցվածքային ճգնաժամի, թե՞ ոչ: Տարածաշրջանի ՍՏՆ-ի գնահատման ընթացակարգը, այսպիսով, բացի ավանդական բաղադրիչներից, պետք է հաշվի առնի նաև զարգացման այն փուլը, որում գտնվում է տարածաշրջանը և նրա դիրքը «կենտրոն-ծայրամաս» առանցքի վրա:

Որպես տարածաշրջանի տնտեսության կառուցվածքային վերափոխման (վերակառուցման) ինտենսիվությունը բնութագրող քանակական մեծություն՝ կարող է հանդես գալ կառուցվածքային տեղաշարժերի գործակիցը, որը հաշվարկվում է որպես որոշակի ժամանակահատվածում գումարային արտահայտությամբ արտադրության ճյուղերի տեսակարար կշիռների փոփոխություններ:

Վերլուծության ժամանակ յուրաքանչյուր տարածաշրջանում կարելի է առանձնացնել բազային և տեղական ճյուղերը: Բազային ճյուղերի շարքին կդասվեն տնտեսության այն ճյուղերը, որոնք ապրանքներ և ծառայություններ են արտահանում տարածաշրջանից, իսկ տեղական ճյուղերի շարքին կդասվեն նրանք, որոնք գերազանցապես բավարարում են տեղական շուկայի պահանջմունքները: Տարածաշրջանային տնտեսության համար արդյունավետ աշխատող բազային ճյուղերի առկայությունը սկզբունքորեն շատ կարևոր է, քանի որ դրանք ապահովում են տարածաշրջանի առաջնային եկամուտների հոսքերը: Տեղական ճյուղերն իրականացնում են այդ եկամտի վերաբաշխման և բազմապատկման գործառույթներ: Եթե բազային ճյուղերն ի վիճակի չեն իրականացնել իրենց գործառույթները, ապա ճգնաժամի մեջ կհայտնվեն նաև տեղական ճյուղերը:

Տարածաշրջանային տնտեսության հեռանկարայնության և մրցունակության գնահատումն իրականացվում է տեղական տնտեսության մեջ դրանց հարաբերական կենտրոնացումից ու դրա դինամիկայից ելնելով: Ճյուղի բարձր կենտրոնացումը նշանակում է, որ տվյալ տարածաշրջանում առկա են այնպիսի գործոններ, որոնք նպաստում են դրա զարգացմանը, իսկ ճյուղի դինամիկան ցույց է տալիս, թե ինչպես են փոփոխվում տարածաշրջանային գործոնները ժամանակի ընթացքում:

Տնտեսական ներուժի գնահատականը ձևավորվում է երկու բաղադրիչներից: Նախ և առաջ անհրաժեշտ է գնահատել անմիջականորեն ՍՏՆ-ն, և երկրորդ՝ դրա օգտագործման մակարդակը:

Ներուժի օգտագործման մակարդակ ասելով հասկացվում է տարածաշրջանի պոտենցիալ հնարավորությունների կիրառման փաստացի ձևավորված աստիճանը: Գոյություն ունեն ինչպես վիճակագրական, այնպես էլ փորձագիտական մեթոդներ, որոնք թույլ են տալիս գնահատել ներուժի օգտագործման (թերօգտագործման) մակարդակը՝ առանց ներուժի բացարձակ մեծության չափման: Ընդհանուր առմամբ, մի շարք դեպքերում նույնպես հնարավոր է գնահատել միայն ներուժի օգտագործման մակարդակը՝ առանց այդ ներուժի մեծությունը քանակապես չափելու:

Մենք արդեն առանձնացրինք տարածաշրջանի ՍՏՆ-ի գնահատման երկու հնարավոր մոտեցումները՝ վերարտադրողական և վարքագծային: Դրանցից առաջինի շրջանակներում հնարավոր է տարածաշրջանը դիտարկել որպես համեմատաբար փակ համակարգ՝ ելնելով արտադրության գործոնների արդյունավետության ձևավորված ցուցանիշներից: Երկրորդ դեպքում անխուսափելիորեն պետք է վերլուծության ընթացքում դիտարկել տարածաշրջանների համալիրը, դրանց փոխազդեցության գործընթացները, դրանց միջև ռեսուրսների բաշխման բնույթը և այլն: Տարածաշրջանների սոցիալ-տնտեսական ներուժին նվիրված ժամանակակից հետազոտություններում առկա են և՛ մեկ, և՛ մյուս մոտեցման օրինակներ:

Որպես առաջին մոտեցման օրինակ՝ կարելի է նշել հետևյալը. ներուժի կառուցվածքում առանձնացվում են արտադրողական ուժերը (ԱՈՒ), այն է՝ բնակչությունը, աշխատանքի առարկաները, վառելիքի և էներգիայի սպառումը, գործող հիմնական ֆոնդերը և նյութերի ու վառելիքի պահուստները, չգործարկված հիմնական ֆոնդերը, գործազուրկների թվաքանակը, ազատ դրամական միջոցները[1]: Այս առումով.

$$ԱՈՒ = Ս + ՀՖԱ + ԱԾ,$$

որտեղ՝

Ս-ն՝ աշխատանքի առարկաների սպառման տարեկան մեծությունն է արժեքային արտահայտությամբ,

ՀՖԱ-ն՝ հիմնական ֆոնդերի միջին տարեկան արժեքն է,

ԱԾ-ն՝ աշխատուժի ծախսն է՝ աշխատավարձի տարեկան ֆոնդի տեսքով:

Այս դեպքում տնտեսական ներուժն (ՏՆ) իրենից կներկայացնի արտադրողական ուժերի և պահուստների (Պ) հանրագումարը (ՏՆ = ԱՈՒ + Պ), իսկ ներուժի օգտագործման մակարդակը ($Ն_{օգտ}$) հավասար կլինի արտադրողական ուժերի և տնտեսական ներուժի հարաբերությանը.

$$Ն_{օգտ} = ԱՈՒ / ՏՆ:$$

Այլ աշխատություններում, որպես արտադրական ներուժի բնութագրիչներ, առաջարկվում է օգտագործել արտադրության ծավալը և արդյունավետությունը, արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը,

---

[1] Տե՛ս "Социально-экономический потенциал: проблемы оценки, использования, управления", УрО РАН, Екатеринбург, 1997, էջ 21-22 :

մատակարարման և իրացման պայմանները, արտադրանքի տեխնոլոգիական մակարդակը, արտադրանքի մրցունակությունը, արտահանման ներուժը, շորրորդական ոլորտի ճյուղերում զբաղվածների տեսակարար կշիռը, նորարարությունների (տեխնոլոգիական, կազմակերպչական) նկատմամբ ընկալունակությունը, ենթակառուցվածքների զարգացման մակարդակը, տեղեկատվության մակարդակը, ներտարածաշրջանային փոխհամագործակցության ներուժը: Նշենք նաև, որ այս ցուցանիշներից շատերը ժամանակակից հայկական իրականության մեջ չեն կարող քիչ թե շատ ճիշտ գնահատվել՝ առաջին հերթին վիճակագրական համապատասխան տվյալների բացակայության պատճառով, և ներկայումս դրանց չափումը հնարավոր է միայն ձեռնարկությունների ընտրանքային հետազոտությունների հիման վրա:

Մեկ այլ մոտեցմամբ տարածաշրջանի ՍՏՆ-ի գնահատման ժամանակ շեշտը դրվում է տարածաշրջանների մրցակցային առավելությունների վրա: Այսպես, Ռ. Ի. Շնիպերն առանձնացնում է մրցակցային 20 դիրքեր (տարածաշրջանի տրանսպորտային և աշխարհագրական դիրքը, ռեսուրսներով ապահովվածությունը, գիտատեխնիկական ներուժը, էկոլոգիական վիճակը և այլն): Ըստ նրա՝ որպես ընդհանրացնող գործոն, որը որոշում է տարածաշրջանների մրցակցային դիրքերը, հանդիսանում է տարածաշրջանների միջև աշխատանքի բաշխման գործընթացը և միջտարածաշրջանային ինտեգրացիայի արդյունավետությունը[2]:

Գ. Ա. Ունտուրան կիրառում է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ինդիկատորի վարկանիշային (ռեյտինգային) գնահատականը, որը բնութագրում է «բնակչության համար բնակության ինտեգրալ բարենպաստության մակարդակը»: Այս դեպքում բնակության բարենպաստությունը որոշվում է՝ ելնելով ոչ միայն բնակչության եկամուտների, այլև սոցիալական անվտանգության մակարդակից:

Գնահատման կազմում մտնում են՝

- արտաքին միջավայրի չափանիշները,
- տարածաշրջանային միջավայրի չափանիշները,
- արտադրության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները,
- շուկայական միջավայրի չափանիշները:

Որպես համալիր ինդիկատորներ՝ առաջարկվում են ներդրումային ներուժը, մրցակցային դիրքերը, ինքնազարգացման ռեսուրսների մակարդակը, դեպրեսիվության մակարդակը, բնակչության համար բնակության բարենպաստության մակարդակը: Այս մոտեցմամբ տարածաշրջանը գնահատվում է ներդրումային գրավչության տեսանկյունից և որպես կենսագործունեության միջավայր: Արդյունքում, ենթադրվում է, որ պետք է ստացվեն ինչպես ապրանքների արտադրության գծով տարածաշրջանի պոտենցիալ հնարավորությունների գնահատականը, այնպես էլ լրացուցիչ աշխատանքների և ռեսուրսների ծախսի այն ծավալները, որոնք առաջանում են մրցակցային այդպիսի դիրքերի ապահովման ու պահպանման գործընթացում[3]:

Օ. Ն. Նեստերենկոն առաջարկում է ներուժը դիտարկել մարքեթինգային դիրքերից՝ որպես մրցակցային առավելությունների և, համապատասխանաբար, տարածաշրջանի թույլ կողմերի համակարգ: Այնուհետև, ներմուծվում է դինամիկ բաղադրիչը՝ տարածաշրջանի հեռանկարային հնարավորությունների գնահատականը, որն անհրաժեշտ է մրցակցային առավելությունների գեներացման և թույլ կողմերի «հարթեցման» մեխանիզմի մշակման համար (որում էլ կայանում է մարքեթինգի ռազմավարությունը), իսկ հեռանկարը գնահատվում է երկու տեսանկյունից՝ արտաքին և ներքին գործոնների համար: Ընդ որում, առաջարկվում է նաև տարածաշրջանի ընդհանուր վարկանիշը կազմել ընթացիկ վիճակի և հեռանկարի վարկանիշերից ելնելով: Հեռանկարի վարկանիշն, իր հերթին, ձևավորվում է տարածաշրջանի զարգացման ներքին և արտաքին գործոնների դինամիկ հեռանկարի հիման վրա[4]: Սակայն, պետք է նշել նաև, որ հեռանկարի գնահատականը դժվար ֆորմալիզացվող է և կարող է, որպես կանոն, դուրս բերվել միայն փորձագիտական գնահատականների միջոցով:

Ռուսական «Էքսպերտ» ամսագիրը ներդրումային ներուժի վարկանիշի ձևավորման համար օգտագործում է ներուժի յոթ՝ ռեսուրսահումքային (բնական ռեսուրսների հիմնական տեսակների գծով հաշվեկշռային պահուստներով միջին կշռված ապահովվածությունը), արտադրական (տարածաշրջանում բնակչության տնտեսական գործունեության համախառն արդյունքը), ենթակառուցվածքային (տարածաշրջանի տնտեսա-աշխարհագրական դիրքը և ենթակառուցվածքներով ապահովվածությունը), ինստիտուցիոնալ (շուկայական տնտեսության առաջատար ինստիտուտների զարգացման մակարդակը), սպառողական (տարածաշրջանի բնակչության համախառն գնողունակությունը), նորարարական (տարածաշրջանում գիտատեխնիկական առաջընթացի ներդրման մակարդակը) և ինտելեկտուալ (բնակչության կրթական մակարդակը) բաղադրիչներ:

Ներդրումային ներուժի ձևավորման գործում ամենամեծ կշիռ ունեն այն գործոնները, որոնք կուտակվել են երկարաժամկետ հատվածում տնտեսական գործունեության գործընթացում, որոնցից են՝ տարածաշրջանի ենթակառուցվածքային յուրացման մակարդակը, նորարարական ներուժը և բնակչության ինտելեկտուալ ներուժը:

Այսպիսի հետազոտությունների մեծ մասն ունի լուրջ թերություն: Դրանցում օգտագործվող ցուցանիշների համար չկան բավարար վիճակագրական բազաներ, որի պատճառով էլ հեղինակները լայնորեն օգտագործում են փորձագիտական գնահատումների մեթոդը: Չբացառելով նման մոտեցման նպատակահարմարությունը՝ հարկ է ընդունել, որ ինչպես հետազոտություններում, այնպես էլ դրանց արդյունքում այս մոտեցումը ներմուծում է սուբյեկտիվիզմի հայտնի տարրեր և էականորեն դժվարեցնում է ստացված արդյունքների համադրման գործընթացը: Մի շարք հետազոտությունների առնտրային բնույթը դրանց հեղի-

---

[2] Տե՛ս Шнипер Р. И. "Регион: диагностика и прогнозирование", Новосибирск, 1997, էջ 67:

[3] Տե՛ս Унтура Г. А., Евсеенко А. В. "Риски субъектов федерации в условиях перехода к рынку", Новосибирск, 1996, էջ 147-155:

[4] Տե՛ս Нестеренко О. Н. "Маркетинговый подход к оценке и реализации социально-экономического потенциала территории", Екатеринбург, 1996, էջ 42-45:

նակներին ստիպում է գաղտնի պահել տեղեկատվության մշակման մեթոդիկան: Այսպես, «Էքսպերտ» ամսագրի վարկանիշերը ցույց չեն տալիս՝ թե կոնկրետ ի՞նչ տվյալներ են օգտագործվել և ինչպե՞ս է ստացվել համընդհանուր ցուցանիշը: Ի. Տիխոմիրովայի գրքում օգտագործված են մոտ 100 ցուցանիշներ, իսկ թե ինչպե՞ս են դրանք դառնում մեկ ընդհանրական ցուցանիշ՝ մնում է անհայտ, իսկ ստացված արդյունքի (վարկանիշի) լիարժեք բացատրության բացակայությունը և աշխատանքի «ոչ թափանցիկությունը» դժվարացնում է դրանց օբյեկտիվ գնահատումը: Եվ սա այն դեպքում, երբ այսպիսի վարկանիշերը ոչ միշտ կարող են պատասխան տալ այն հարցերին, որոնք հետաքրքրում են ներդրողներին, և որոնց էլ, կարծես թե, ուղղված են այսպիսի հետազոտությունները:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ «տնտեսական ներուժ» հասկացությունը ժամանակի ընթացքում որոշակի էվոլյուցիա է ապրել: Սկզբնական շրջանում ի հայտ գալով որպես ռեսուրսների համախմբի և (կամ) դրանց «վերամշակման» հզորության հոմանիշ՝ հետագայում այն լրացվեց ռեսուրսների օգտագործման գործընթացը պայմանավորող կազմակերպչական և սոցիալական գործոնների քննարկմամբ: Եթե սկզբնական շրջանում ներուժի զարգացման խնդիրը դիտարկվում էր որպես ռեսուրսների (հիմնական ֆոնդերի, հումքի, աշխատուժի և այլն) գլխավորապես քանակական ավելացում, իսկ ինտենսիֆիկացման տակ հասկացվում էր նոր տեխնոլոգիաների ներդրում և աշխատուժի որակի բարձրացում, ապա ավելի ուշ ինտենսիֆիկացիայի գործոններն ինքնին սկսեցին դիտարկվել որպես սոցիալական պայմանների (աշխատանքի արդյունքներում շահագրգռվածության մեծացման, աշխատանքային կարգապահության մակարդակի բարձրացման, նոր տեխնոլոգիաների ներդրման ակտիվացման և այլնի), կառավարման բարելավման և դրա նոր ձևերի որոնման արդյունք, իսկ ռեսուրսների զուտ քանակական աճը մղվեց երկրորդ պլան:

Շուկայական վերափոխումները և տնտեսական գործունեության ազատականացումը հանգեցրին տնտեսական ներուժի տնտեսագիտական բովանդակության նոր ընկալման և մեկնաբանման՝ որպես մրցակցության պայմաններում սոցիալ-տնտեսական համակարգի հարմարվողականության ու զարգացման ունակության: Այսպիսով, ներուժը հանդես է գալիս որպես համալիր բնութագրիչ, որը հաշվի է առնում ոչ այնքան օբյեկտի (ձեռնարկության, տարածաշրջանի, երկրի) ներքին ռեսուրսները, այնպիսիք, ինչպիսիք են՝ նյութական ակտիվները, կադրերը, տեխնոլոգիաները և այլն, որքան շուկայական և վարչական ներքին ու արտաքին միջավայրերը, որոնք նախկինում գործնականորեն չէին ներառվում «ներուժ» հասկացության բացատրության մեջ:

Այս պայմաններում տարածաշրջանի ՍՏՆ-ի գնահատումը պետք է կրի համալիր, համակարգային բնույթ և հաշվի առնի ինչպես տարածաշրջանի ներքին ռեսուրսները, այնպես էլ դրա վրա ազդող արտաքին գործոնները: Գնահատման համար կարող են օգտագործվել տարբեր մեթոդներ՝ էկոնոմետրիկական մոդելավորումը (օգտագործելով արտադրական ֆունկցիաները), մարքեթինգային մոտեցումը՝ օգտագործելով տարածաշրջանում արտադրվող արտադրանքի կյանքի ցիկլի հասկացությունը և դրա իրացումից ստացվող եկամուտները կամ մրցակցային առավելությունների հետազոտման վրա հիմնված մեթոդը, ինստիտուցիոնալ վերլուծությունները, որոնք բնութագրում են տնտեսական ագենտների գործունեության և համագործակցության արդյունավետությունը և այլն: Ընդ որում, շատ կարևոր դեր է խաղում տարածաշրջանի ՍՏՆ-ի ուսումնասիրության բուն (հիմնական) նպատակը, որը կանխորոշում է ինչպես ներուժի գնահատման ընդհանրական ցուցանիշի (բնակչության բարեկեցության մակարդակի, արտադրանքի թողարկման, վարկունակության և այլն) ընտրությունը, այնպես էլ ուսումնասիրության մեթոդիկան:

ՎԻԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տ.գ.թ.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ամբողջ հանրային կառավարման համակարգում ռազմավարության առկայությունը շատ կարևոր է: Յուրաքանչյուր երկիր փորձում է իր համար ձևակերպել այն ռազմավարական քայլերի ամբողջությունը, որոնք հետագայում կբարձրացնեն տվյալ երկրի դիրքերը ողջ համաշխարհային տնտեսության մեջ, ինչպես նաև կապահովեն առավելագույն բարեկեցություն սեփական ժողովրդի համար: Պետության տնտեսական ռազմավարությունը, որի հիմքում ընկած են առաջնահերթությունները և պետության կողմից տնտեսության մեջ միջամտության լծակները, իրականացվում են տնտեսական քաղաքականության առանձին ձևերի միջոցով: Տնտեսական քաղաքականությունը հստակեցնում է այն սկզբունքների ամբողջությունը, որով պետությունը միջամտում է երկրի տնտեսական կյանքին[1]:

Պետության տնտեսական քաղաքականության տարատեսակները կամ ուղղություններն են՝ արտաքին տնտեսական, ինստիտուցիոնալ, ներդրումային, ֆինանսական, դրամավարկային, տարածաշրջանային, գոտիական քաղաքականություններ և այլն:

---

[1] Албегов И.М., Емцов Р.Г., Холопов А.В., Государственная экономическая политика: Опыт перехода к рынку"/Под общей редакцией д.э.н., профессора Сидоровича А.В. –М.: Издательство "Дело и сервис" 1998. с 37.